Որոշում թիվ 1

-«Մեդիսար» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել հրավերի պահանջների նկատմամբ ներկայացված տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունների վերաբերյալ՝ նրան առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

- «ՋԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Դ.Մակիչյան)

Որոշում թիվ 2.

-«ՋԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը,ժամը 12:00-ին, ք. Երևան, Ա.Բաբաջանյան 4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Տ.Սաղաթելյան
Անդամներ՝		Ս. Ղուկասյան
		Տ. Վարդանյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան

Արձանագրություն N 3
«ՋԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Հալաբյան 31/2 «16» «02» 2018թ
Ժ.15:50

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Սաղաթելյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ղուկասյանը,Տ. Վարդանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Տ. Սաղաթելյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ «Մեդիսար» ՍՊԸ-ին 12.02.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:
- 31.01.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել «Մեդիսար» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 15.02.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

2. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Տ. Սաղաթելյան)

Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի ուսումնասիրության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Ապրանքային նշան սյունակը լրացված չէ,
2) Տեխնիկական բնութագիրը ներկայացված է ոչ բավական մանրամասնությամբ, ինչը հնարավորություն չի տալիս գնահատող հանձնաժողովին գնահատել ապրանքի համապատասխանությունը հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրին,
3) Արտադրողի անվանումը ներկայացված է ոչ լիարժեք

Ելնելով վերոգրյալից.

Հանձնաժողովը որոշեց.